Հարբեցութիւնը Պետերբուրգում. Вѣд. Петерб. Градонач. յուն. 16-ին հաղորդում է որ անցեալ յունուարի 1-ից մինչեւ 15-ը, այսինքն երկու շաբաթուան ընթացքում Պետերբուրգի փողոցներում ոստիկանութիւնը բռնել է ամենայայտարակհարբածներ թուով 1,100 հոգի. իսկ անցեալ դեկտ. 17—31, դարձեալ երկու շաբաթուան ընթացքում—2,259 հոգի: Դարձեալ յունուարի 21-ից մինչեւ սոյն փետրուարի 4-ը, այսինքն 15 օրուան ընթացքում, մայրաքաղաքի փողոցներից ոստիկանատուն են տարուել ամենայայտնաւոր հարբածներ թուով 2,259.

Ո՞րքան սպիրտ է գործածուում Պետերբուրգի նահանգում. 1895 թ. Պետերբուրգի նահանգի 1,899,600 բնակիչները խմել են 1,225,840 վեդրօ սպիրտ, այսինքն երկու անգամ աւելի քան Արխանգելսկի, Վոլոգդայի, Նովգորոդի, Օլոնեցկի եւ Պսկովի նահանգները միասին, որոնց բնակիչների թիւն է 4,182,000. Պետերբուրգի նահանգում,—անշուշտ մայրաքաղաքի շնորհիւ,—622 հոգուն մի գինետուն է գալիս: (С Отеч.).



ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ.

Մեր խոստման համաձայն մատչում ենք արդ մի թռուցիկ հաշիւ տալու մեր եկեղեցական կեանքի մասին Օսմանեան տէրութեան մէջ. Այդ հաշիւը մի տխուր դամբանագիր է միայն. Մեր եկեղեցու պատմութեան մէջ մի այնպիսի տարեշրջան չէ եղել երբէք, չնայելով որ այդ եկեղեցին մարտ է մղել մոգակրօնութեան, առաջին մոլեռանդ արաբների, հիւսիսական վայրենի հոների, թիւրքերի և նոր պարսիկների հետ. «Ապարատի» ընթերցողները կարդալով մեր տպագրած հաշիւն երևի հարցումն կանեն, թէ արդեօք կայ այլ ևս մի տաճկահայ եկեղեցի.

Անցեալ տառապանաց տարում մի փայլուն կէտ կայ տաճկահայ եկեղեցական պատմութեան մէջ. այդ է մեր արևմտեան հայ եկեղեցական եղբարց քրիստոնէութեան մէջ ունեցած տոկունութիւնը և նրանց առաջնորդ պատրիարքի, ամենապատիւ Մատթէոս արքեպիսկոպոսի, անվեհերութիւնը, որով քաջ հովիւ հանդիսացաւ իր հօտին, արժանացաւ ամէնքի համակրանաց և հայրապետական Աթոռից «քաջարթուն» մականուան.

Միայն տարեգրի պարտքը կատարելով պիտի յիշատակենք այստեղ երկու կրտսեր աթոռների հայրապետների մահը. Այսօր թափուր են թէ Սսի և թէ Աղթամարայ աթոռները. Դրանց երկրի վրայ բազմող գահակալներն ևս առ Տէր փոխեցան և միակ ժառանգութիւնը, որ պիտի թողնէին իրենց հովուած եկեղեցիներին, իրենց անձնական գանձերն ևս անհետ կորան. Կիլիկիոյ աթոռի համար ընտրուած գահակալ Գերապ. Գրիգորիս սրբազանը արգելուած է Ս. Պօլսում, իսկ նորա փոխանակ, ինչպէս երևում է, Կիլիկիոյ մի այլ եպիսկոպոս, ինքնագլուխ կաթուղիկոս է օծուել.

Համաձայն Տաճկաստանի քաղաքական բաժանման, ըստ նահանգների յառաջ ենք բերում մի առ մի այն դրկանքները, որ կրել է եկեղեցին, այսինքն պղծուած եկեղեցիների ցանկը, բռնի հաւատափոխութիւնք և նահատակութիւնք միմիայն եկեղեցականներինը յայտնէ յանուանէ յիշելով, վասն զի աշխարհականների թիւն մի քանի տասնեակ հազարներ է.

1. ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳ. Տրապիզոն քաղաքի կոտորածից յետոյ, որ տեղի է ունեցել սեպտեմբերի 26-ին (Հ. տ.) շրջակայ գիւղերն ենթարկուել են միևնոյն դժբախտութեանց. Վերանայ, Անիֆա, Գրորի, Արիոն, Սիւրմենէ, Գագրա, Զեֆանոս, Սիֆտէր, Գրոմիլա, Սգաւիդաս, Մայիրա, Ալչախդերէ և Մախտելա գիւղերի եկեղեցիներն աւերուած ու կործանուած են և վեց քահանայ սպանուած. Ալչախդերէ, Մախտելա Գրոմիլա և Կերտանաց գիւղերի հայ բնակիչները բռնութեամբ իսլամութեան են դարձրած.

2. ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳ. Հոկտեմբերի 18-ին (Հ. տ.) տեղի ունեցած Էրզրումի կոտորածի ժամանակ Տէր Գարեգինը, որ այդ քաղաքի հայ եկեղեցիներից մէկի քահանան էր, սպանուել է իր տան մէջ և նրա դիակը անյայտացրել են. Դունիկ գիւղի հայ եկեղեցու քահանան՝ Տէր Եղիան, որ գործով Էրզրում էր գտնուում, կառավարչական ատեանում խողխողուել է ուրիշ ութ հայերի հետ. Ինչ շրջակայ դաշտին է վերաբերում Թոփալ—Զաւուշ գիւղի եկեղեցին աւարի ենթարկուելուց յետոյ՝ պղծուել է աղտեղութիւններով. Ուսմուգում և Դաղ գիւղերի եկեղեցիները հրդեհուել են և նրանց քահանաները խողխողուել. Դունիկ, Օձնի և Գարաբ գիւղերի եկեղեցիները մասամբ աւերուել են. Խաչկայ վանքին կից եկեղեցին կողոպտուել է և վանքի վանահայրը վիրաւորուել.

Բասենի գաւառում վանքն աւերելուց յետոյ վանահայրը՝ Տիմոթէոս վարդապետը միաբանութեան վեց անդամների հետ խողխողուել է և վանքը կրակի մատնուել.

Դերջանի գաւառում, որտեղ կոտորածը տեղի է ունեցել հոկտեմբերի 7-ին (Հ. տ.) գիւղական հայ ազգաբնակութիւնից նրանք, որոնք սպանիչների սրից փախել էին, բռնադատուել են մահմետական կրօն ընդունելու, ինչպէս նաև առաջնորդ Տէր Յուսիկ քահանան.

Բարերդ քաղաքի մէջ՝ Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած կոտորածի ժամանակ՝ չորս եկեղեցիներն աւերուել են և պղծուել. Խորէն Գիւրոյեան վարդապետը, որ մի պատկառելի ծերունի էր, խողխողուել է և Տէր Աշոտ քահանան, առաջնորդական ժամանակաւոր փոխանորդը վիրաւորուել է. Շատ մատաղահաս աղջիկներ յափշտակուել են լաչերի ձեռքով, որոնց և տարել են իրանց երկիրը՝ Տրապիզոնի նահանգը. Հրդեհի ժամանակ տասն և չորս հայ կանանց իրանց կաթնկեր երեխաների հետ այրել են իրանց տներումը.

Բարերդի շրջակայ գիւղերում Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Ս. Քրիստափոր վանքերը աւարուել ու պղծուել են և սրբոց պատկերները պատառուել.

Լուսոնք և Ալմեղքա գիւղերի եկեղեցիները աւարի ենթարկուելուց յետ պղծուել են աղտեղութիւններով. Լուսոնք գիւղի մէջ ս. աւետարանը

հազար կտոր են արել, փողոցը ձգել և ոտքի տակ տուել։ Քսանթա գիւղում Տէր Յովհաննէս և Տէր Յարութիւն քահանաները խողխողուել են. եկեղեցին մզկիթի է փոխարկուել. մօտ չորս հարիւր հոգի կոտորուել են, իսկ ազատուողները՝ մեծ մասամբ կանայք, պարտաւորուել են իսլամութիւն ընդունել։

Բլուր, Բլուրակ, Բուխտի, Ս. Թորոս, Նեգ և Բալախոր գիւղերի եկեղեցիները փոխարկուել են մզկիթի։ Տէր Մակարը, Տէր Գրիգորն ու մի ուրիշ քահանայ սպանուել են։ Բոնի կերպով իսլամութիւն են ընդունել տուել ինչպէս վերոյիշեալ գիւղերի բնակիչներն, նոյնպէս և Վարդանի, Քարաւերակի, Զախմախի, Աւերեքի, Կափոսի, Օձտեղի, Վերին—Կիրճի բնակիչներին։ Բլուր գիւղի բնակիչներին ստիպմամբ իսլամութիւնն ընդունել տալուց յետոյ՝ հրոսակները հրացանաձգութեամբ վրայ են տուել, թերևս կասկածելով որ նրանք սրտանց կապուած են քրիստոնէական կրօնի հետ։ Նորագարձների գլխաւորներին փաթթոցներ են աւելացրել և նրանց եկեղեցի տարել ու նրանց ստիպել են իբրև մզկիթում ըստ մահմետականութեան նամազ անել։

Բարերգում և շրջակայքում խաչի պաշտամունքը բոլորովին դադարել է։

Քեղի գաւառակում, ուր կոտորածը հոկտեմբերի 10-ին է եղել, Տէր Խաչը, որ Կանգստուն գիւղի հայ եկեղեցու պատկառելի ծերունազարդ քահանան էր, խողխողուել է։ Հետևեալ քսան և երկու եկեղեցիներն ու վանքերն աւարուել են։

1. Դենէք գիւղի Ս. Գէորգ եկեղեցին։
2. Մելիկան « » Աստուածածին »
3. Շէն « » Կարապետ »
4. Շերման « » Գէորգ »
5. Արինց « » Ամենափրկիչ »
6. Հանգստուն « » Խաչ »
7. Սագաճոր « » Խաչ »
8. Հարուկ « » Սարգիս »
9. Կրգչուրուկ « » Աստուածածին »
10. Զիթիլիգ « » » »
11. Զան « » Մինաս »
12. Կերպող « » Սարգիս »
13. Օրօր « » Աստուածածին »
14. Սարիբաշ « » Յովհաննէս »
15. Խոզքար « » Նիկողոս »
16. Սերկևիլ « » Աստուածածին »
17. Սիխանոբ « » Մինաս »
18. Աբողնաք « » Յակոբ »
19. Աստղբերդ « » Սարգիս »
20. Աղբիշուգ « » » »
21. Ջերոր « » Աստուածածին »
22. Խուփ « » Կարապետ »
23. Հանգստուն գիւղի մօտերը Ս. Կարապետի վանքը
24. Օսնակ « » Ս. Կիրակոսի վանքը։

Երզնկայի կոտորածի ժամանակ, հոկտեմբերի 9-ին աւարուել են այս թեմի ութ վանքերը. քանդել են սեղանները և փոգոտել Տէր Ղևոնդ քահանային, որ Զարչարանաց Ս. Լուսաւորիչ վանքի վանահայրն էր, և նորա հետ մի ուրիշ հայի, որ վանքն էր ապաւինել։ Խնորիկ և Քարատաշ գիւղերի հայ եկեղեցիների քահանաներն ու սրանցից մէկի երկու երեխաները նոյնպէս խողխողել են։ Արդուան գիւղում յարձակուողները կոտրել են եկեղեցու դուռը և ներս խուժելով՝ այնտեղ ապաւինողներից երեսուն հոգու խողխողել են. զոհերի թուում կային բազմաթիւ կանայք ու երեխաներ։

Միղուեցիկ գիւղում կոտորածից ազատուողները բռնի իսլամութեան են դարձել։

Տէր Գէորգ Եղեկիելեան՝ Երզնկայի առաջնորդական փոխանորդ և Տէր Կոստանդին Էրհամջեան՝ հայ եկեղեցու քահանաներից մէկը կալանաւորուել են յիսունի չափ հայերի հետ և ցարդ հեծում են յանցաւորներին ու ոճրագործներին յատուկ բանտերի մէջ և այնտեղ ամէն տեսակ անարգանքի են ենթարկուում։

Կուռուչայի գաւառակում՝ Մեծ ու Փոքր Արմրդան գիւղերի մէջ, ուր կոտորածը տեղի է ունեցել հոկտեմբերի 16-ին և 17-ին, Մեծ Արմրդանի եկեղեցին գլխովին աւերուել է. այդ գիւղի Տէր Յակոբ քահանան հրացանի է բռնուել, մինչդեռ հարեան Փոքր-Արմրդանի քահանայ Տէր Գրիգորիսը փոգոտուել է և մի այլ քահանայ վիրաւորուել։ Տանձի գիւղի հայերը խմբովին իսլամութեան են դարձել և թլփատուել։

3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳ.—Զախող, Ծողու, Տապ, Խրոխտենց, Մէջկանց, Միւլք-Գիճի, Արգինց և Հախտ գիւղերում սպանուած են չորս քահանայ. այս գիւղերի բնակիչներին. որոնց թուում նաև երեք քահանայից, բռնի մահմետականութիւն են ընդունել տուել։ Եկեղեցիներն և վանքերը կողոպտուած, այրուած և աւերուած են։ Ս. Յակոբ և Կարմրակ վանքերը աւարի են մատնուած. Պատականց գիւղի հայոց եկեղեցու քահանան սպանուած է. Փէյներ, Նարեկ, Վերին Սարին, Հաղոսէն, Վարենց, Փիշաւկանք, Պատկանց, Գելոզ, և Աղգանան գիւղերի բնակիչներին մահու սպառնալիքի կարգալով ուրանալ են տուել իրենց հաւատը և մահմեդականութիւն ընդունելու ստիպել։ Քիւրդերը բոլորովին կողոպտել են Կարա—Դերէի վանքը, որ գտնուում է Բասեն—Դաշտ գաւառակում։ իսկ Գաղաղեա, Գիգան, Արեգ, Գէյնամիրան, Գոմեր, Տարենց և Նար գիւղերի բնակիչներին բռնի մահմեդականութիւն են ընդունել տուել։ Հատախի գաւառի բոլոր հայ գիւղերը կողոպտուած են և նոցա բնակիչները մահուան սպառնալիքի ներքոյ մահմեդականութիւն են ընդունել։ Հոգեաց գաւառի Նորդուզ վանքը բոլորովին կողոպտուած է, հայ գիւղօրէից բնակիչները ստիպուած են եղել մահմեդականութիւն ընդունել, իրենց կեանքը փրկելու համար։ Հաւաճորի գաւառում Անգղայ ս. Աստուածածին, Երեմեղայ ս. Աստուածածին, Սերիբայ ս. Աստուածածին և Խրկի ս. Գէորգ վանքերը կողոպտուած են, ինչպէս նաև Քոսպ, Ղղել—Դաշ, Պելթենց, Գեղչի, Աստուածաշէն, Գէմ, Խորխում, Քերկլ, Իշխանիգոմ, Ագդան, Գերծ, Քէօշկ, ս. Վարդան, Արդամերդ, Շուրստան, Քդակ և Կենդանանց գիւղերի Հայոց եկեղեցիները։

Կանգկան գաւառի հետևեալ վանքերը կողոպտուած և աւերուած են.

Ա. Ուրանէ ս. Աստուածածին.
Բ. Նիրոսի ս. Թոմաս.
Գ. Գոմայ ս. Գէորգ.
Դ. Կենդրոնից վանք.
Ե. Սորբայ ս. Կարապետ.
Զ. Սմրատաշէնի ս. Աստուածածին.

Սորբայ վանքի վանահայր Պետրոս վարդապետի լեզուն ու այլ անդամները կարել և ապա սպանել են ամենասոսկալի տանջանքներից յետոյ։ Սմիրն, Ուզուց, Բիկանց և մի քանի այլ գիւղերի հայ բնակիչները և Սմիրնի հայոց եկեղեցու երէցը բռնադատուել են մահմետականութիւն ընդունելու. բազմաթիւ կանայք յափշտակուած են։

Կաւաշ գաւառի հետևեալ վանքերը կողոպտուած և աւերուած են.

Ա. Զարահանի ս. Նշան.
Բ. Սպիտակի ս. Աստուածածին.
Գ. Ս. Յարութիւն վանք.
Դ. Ս. Թոմաս վանք.
Ե. Մոխրաբերդի վանք.
Զ. Ս. Սահակ լուսապատուղ վանք.
Է. Նոր գիւղի վանք.

Ադելջևազ գաւառում կողոպտուած են ս. Աբանչելագործ վանքը և Կիազուխ, Վերին—Սիփան, Ներքին—Սիփան, Արէն, Արէնջ, Դուբս, Գիւղէլ, Խորանց, Բարդաղ, Արզերայ, Կարա—Քէշիշ, Վիէկաձերուկ, Այգեձոր, Չերակլու, Փիշնագոմեր, Անուշ—աղբիւր, Նորշէն և Զուղայ գիւղերի եկեղեցիների սեղանները կործանուած են և ամենայն տեսակ սրբապղծութիւն գործուած. Աւելին ևս, մի քանի տեղ քիւրդերը եկեղեցիներից յափշտակած քահանայական զգեստներն հագած, ձեռներին ս. խաչ, աւետարան և ս. սկիհ, սկսել են անամօթ պարեր պարել թէ իրենց և թէ հայոց գիւղերում՝ քրիստոնէից հաւատը և եկեղեցին ծաղրելու խորհրդով։

10. Արճիշոյ գաւառում կողոպտուած են Արճոնիք, Գինարեր, Մատղայ, Մենոփ գիւղերի վանքերը, նմանապէս Գէրգիան, Գէյձաղ, Արմեքոն, Գանձակ, Դիլոն, Բամոն, Յարութիւն և Յասպիսնակ գիւղերի եկեղեցիները։

11. Հաղբակ և Պարկերա գաւառների բոլոր հայ գիւղօրէից վանքերն ու եկեղեցիները աւերուած են։

12. Թիմար գաւառում Ալիսի, Էրիրինի ս. Էջմիածին և Ամգու վանքերը կողոպտուած են և աւերուած. հետևեալ գիւղերի եկեղեցիներն ևս նոյն վիճակին են ենթարկուել։

Ա. Արաշէն.
Բ. Մարմէտ
Գ. Եկմալ.
Դ. Ծակտար.
Ե. Մինաշատ.
Զ. Աննավանք.
Է. Ալիւր.
Ը. Խաւինց.

ՐԻԹԼԻՍԻ ՆԱՀԱՆԳ.—Ռիթլիսի կոտորածի զոհերի մէջ, որ հոկ. 13-ին է տեղի ունեցել, եղել են քահանաներ, որոնցից երկուսը եկած էին Խոյթի գաւառից (Մշոյ սանճագ), նոյնպէս երեխաներ 5—12 տարեկան, որոնք ս. Սարգիս եկեղեցու ծխական դպրոցի աշակերտներ էին։ Դիակների մի մասը անյայտացրել են քարիւղով այրելով, իսկ մօտ 80-ը ի թիւս որոնց և տէր Մխիթար քահանայի մարմինը, որ Խոյթի եկեղեցու աւագ քահանան էր, թաղել են տաճկաց գերեզմանատան, համարելով մահմեդականների դիակներ։ Այս քաղաքում նոյնպէս բազմաթիւ աւերումներ են եղել։ Իսկ ինչ վերաբերում է մերձակայ դաշտին՝ Վանիկ և Սասիկ գիւղերում շատ կանայք են սպանուած և մէկ քահանայ։

Երում գաւառի 12 հայ գիւղերում հոկտեմբերի 13-ին տեղի ունեցած կոտորածի ժամանակ, եկեղեցիները սրբապղծելուց յետոյ մզկիթներ են դարձրել։ Նոցա, որոնք խուսափել են մահից, ստիպել են բռնի կերպով մահմետականութիւն ընդունել և թլփատուել։ Քահանաներին ստիպել են գլխի փաթէթներ կրել, նոցա կանանց տուել են իրը ամուսին մոլլաների և իրենց քահանաներին ստիպել ամուսնանալու այն կանանց հետ, որոնք խլուած էին իրենց առաջին ամուսիններից։ Այս քահանաներին տուել են նաև մէկ կամ երկու քիւրդ կին աւելի, հաւատափոխութիւնը միաժամանակ մի քանի հաստատուն կապերով կատարեալ դարձնելու համար։

Մի քանի եղբայրներից բաղկացած ընտանիքներում, մէկին կամ երկուսին յատկապէս սպանել են, նոցա կանանց ամուսնացնելու համար կենդանի մնացած եղբայրների հետ։ Շէրիի օրէնքի համաձայն որ թոյլատրում է այս տեսակ ամուսնութիւններ։

Հիրվան գաւառի գաշտում, ուր մօտ քսան գիւղեր են գտնուում՝ որոնց մէջ յիշուում են Սարուս, Աւին, Ուամ, Նապէն, Սիոմէթ, Թիռնենք գիւղերը, կոտորածից խուսափող հայերին ստիպել են մահմետականութիւն ընդունելու, ինչպէս և նոցա եկեղեցիների քահանաներին. իսկ եկեղեցիներից մի մասը հիմնայատակ կործանել են և միւս մասը փոխարկել մզկիթների։ Ներկայումս Թիւրք մոլլաները վերջիններիս մէջ բազմելով յաղթական կերպով վարդապետում են մահմետական կրօնի սկզբունքները։ Այս գաւառում մի քանի քրիստոնեայ յղի կանանց որովայնները պատառելով դուրս են հանել երեխաներին և յօշոտել։

Կուրենան գիւղի հայ ազգաբնակութեան կէսը որ նոյն գաւառում է գտնուում՝ կոտորուել են, իսկ միւս կէսը մահմեդականութիւն է ընդունել ստիպմամբ։

Մատին և Գինձիկ գիւղերից փախցրել են շատ կանանց ու օրիորդների ի թիւս որոց Գինձիկ հայ գիւղի եկեղեցու քահանայի ամուսնուն։

Դաշտոպ, Խարթ, Օհ, Սակ, Գառթ, Նէլ գիւղերի եկեղեցիները, որոնք գտնուում են Դէրբի գաւառում՝ կողոպտուած են։

Սպակերտ և Խիզան գաւառների կոտորածների ժամանակ, որ օգոստոսի ընթացքում է տեղի ունեցել, հետևեալ վանքերը կողոպտուել են.

Ա. Խիզանի ս. Խաչ վանքը.
Բ. Գամաղիէլ վանքը.
Գ. Պորաձոր վանքը.
Դ. Փաղէնի ս. Աստուածածին վանքը.
Ե. Գէօքսուի ս. Կիրակոս վանքը.
Զ. Սկաւառակ կամ Հիրինի ս. Գէորգ վանքը.
Է. Սորիի ս. Աստուածածին վանքը.

Ս. Խաչի վանահայր Սահակ վարդապետը և Պոշենց գիւղի հայ եկեղեցու քահանան սպանուել են. նոցա դիակները մորթեղերծ են արուած և յարդով լցնելով ծառից կախուած։

Նոյնպէս և սպանել են Գամաղիէլ վանքի վանահօրն, ինչպէս և Պօղոս Խաչատուրեանին, Եղիսի ս. Կիրակոս վանքի պահապանին։ Բռնի Մահմետական են դարձրել Օհանէս վարդապետին, Սկա-

սառակ վանքի վանահօրը, որին երկու կին են տուել. Խիզանի բնակիչներից մի քանի հայերի բռնի կերպով թէքբէի մէջ մտցնելուց յետոյ, խլամութիւն են ընդունել տուել. Նոյնպէս հաւատափոխ են արել Խորինոց գիւղի երեք քահանաներին, որոնց շրջեցրել են փողոցներում փաթեթները գլխներին. ութ գիւղի բնակիչներ որոնք պատկանում են Հէնիձորի նահիէին, բռնադատուել են իսլամ դառնալու, եկեղեցիք և դպրոցները փակուել են և տեղի են ունեցել մի քանի առևանգութիւններ.

Հետևեալ Խիզանի և Սպակերտի շրջանին պատկանող գիւղերի բնակիչներն ստիպուել են մահուան սպառնալիքի ներքոյ մահմեդականութիւն ընդունելու.

ԽԻԶԱՆԻ ՎԻՃԱՆ.—Տարոնց, Ներքին—Տարոն, Կարասու, Վերին—Կարասու, Հէն, Խարիտ, Խուպ, Թաղիկ, Պալասուր, Խազուկոնց Ծիկու, Անտինց, Դամաղիէլ, Խիզանի ս. Խաչ, Դի, Նոր-շէն, Եղուզ, Անապատ, Պռաշենց, Դարսը Մունտինց, Մամթինց, Կասսար, Հակիս, Խորիսոց, Նոնհոզ, Կարինակ, Պաղսար, Լի, Հուլուկ.

ՍՊԱԿԵՐՏԻ ՎԻՃԱՆ.—Վերին-Հորուկ, Ներքին Հորուկ, Ճանճրան, Ներքին-Կոտենց, Վերին-Կոտենց, Ներխան, Օշան, Սիւքար, Բաղինձ, Լուսր, Թաղ, Կիզիս, Տանձիս, Սրասու, Նարկին, Թալար, Պատրոնց, Հուսպ, Խաթ, Սորա, Բաղտ, Սաղան, Արմինղիկ, Տուղաս, Կիրան, Դաշտ, Մատ, Ծեմէն.

Վերին Կարկարի վիճակում Խնձորատի սուրբ Աստուածածին, Ծիկորի սուրբ Երաշխաւոր և Սմրատի վանքերն կողոպտուել են. երկու քահանայք, Եղեկիս գիւղի եկեղեցու երկու քահանայք սպանուել են. նոյնպէս սպանել են և Սարգիս վարդապետին, Ծիկորի վանքի վանահօրն, որի աչքերն հանել են նախապէս. Հետևեալ գիւղերի եկեղեցու պաշտօնեայք և բնակիչները բռնի մահմեդական են դարձրել. Արշան Տացու, Եղիկիս, Բերկրի, Ալէս, Հաբրինց, Հակուրցու, Կոր, Վորից և Խնձորուտ.

Մամրտանդ գաւառում հայ եկեղեցիք կողոպտուել են, քանդուել կամ մկրիթի փոխարկուել, Հայերի մեծամասնութիւնը բռնի մահմեդականացրած են.

Ահա այն գիւղերի անունները, որոնց բնակիչներն ստիպուել են խմբովին մահմեդականութիւն ընդունել.

Ով, Սիզ, Բարկան, Ապարանք, Գիտանց, Հուվինտոնց, Տուանց, Մելհոտի, Հէն—աղբիւր, Մուտ, Կուղինց, Կոնիս, Հարուտ, Բարամուս, Հաղտ, Կարնա, Բարկանց.

Ապարանքի սուրբ Խաչ, Սիզի ս. Խաչ և Տիրուշքի վանքերը փոխարկուած են մզկիթների.

Սղերդ քաղաքում, ուր կոտորածը տեղի է ունեցել նոյեմբերի 3-ին (հ. տ.), կողոպտել են եկեղեցին, առաջնորդարանն և դպրոցը որի դռները բռնի խորտակուել են, Թէոդորոս վարդապետը, առաջնորդական փոխանորդը, ծանրապէս վիրաւորուել է և նրա ծառան սպանուել է. Այս քաղաքում մորթել են նոյնպէս մի քահանայ և բռնաբարել բազմաթիւ կանանց և աղջկանց. բնակիչների մի մասը ստիպուել է մահմեդականութիւն ընդունելու.

Մուշի սանջագում, կողոպտել են Հերկերա գիւղի եկեղեցին, յարձակուողները ս. միւռոնի անօթը ձեռք ձգելով միւռոնով սրբել են իրենց հրացաններն և թրերը. Այժմ Մուշի ձորերում գտնուում են փոքրաքանակ մանուկներ, որոնք իրենց ընտանեաց հետքերը կորուսել են և այդպէս լքեալ թողնուած են, մինչ բնակիչները փախչում են մահուանից ազատուելու համար. Բազմաթիւ կանայք են փախցրել Խէյրեան և Ստէլբուռնատ գիւղերից.

Տէր Վարդան քահանան, որ բիթլիսցի էր, սպանուած է Նաղիկ գիւղի շրջակայքում, Ախլաթի գաւառում.

Կերնոսի, Վազեր, Դարինիս, Տուղմանէ, Գուպար և Կունջք—Համշէն գիւղերի բնակիչներից նրանք, որ ազատուել են կոտորածից, բռնի մահմեդական են դարձրած.

Ճապաղջրի վիճակում Զիրլիկ, Մատրակ, Սինգոր, Գողէմ, ինչպէս և Պեռշիւր, Թիզ, Նորշէն, Մարդուրիկ, Անքի, Մեզուկի, Պիտշորի բնակիչներին մահմեդական են դարձրել, միանգամայն և քահանայից. իսկ եկեղեցիք փոխարկել են մզկիթների և այժմ այն տեղերում քարոզուում է զուրանը. Այս կողմերում խաչի պաշտօնը բոլորովին դադարել է.

ՍՎԱՋԻ (Սեբաստիոյ) ՆԱՀԱՆԳ. Սվազում, կոտորածի ժամանակ, որ տեղի ունեցաւ հոկտեմբերի 21-ին, մեծ բազմութիւն մարդկանց ուժով մահմեդական դարձնելով թլփատել են. Շրջակայ գիւղերում աւելի քան 20 եկեղեցիք կողոպտել են և տեր Աստուածատուր, տեր Ոսկի, տեր Կրօնիտէս քահանաներին, Դուզասար եկեղեցու աւագ քահանային, այսպէս և Թեթմաղ, Ղազի—Մաղարա, Կարահաջիլ, Խորասանա, Քոմաուս, Հանգալ և Գաւրա գիւղերի 7 քահանաներին, այլ և տեր Թեթէոսին, Խարանու գիւղի եկեղեցու քահանային, սպանել են.

Հապին—Գարահիսարի կոտորածի ժամանակ, որ տեղի է ունեցել հոկտեմբերի 16-ին, մզկիթների մինարէթների վերայից հրացաններն ուղղել են դէպի հայոց եկեղեցու պատուհանները և այսպիսով վիրաւորել են այնտեղ ապաւինածներին, սպանել են ս. Փրկիչ եկեղեցու տեր Եղիա քահանային, այդ անմեղ զոհերի թաղման կարգը կատարելու համար. Թամզարա գիւղի կոտորածների ժամանակ, որ տեղի է ունեցել հոկտեմբերի 15-ին և 18-ին, կողոպտել են ս. Թադեւոս եկեղեցին, և ս. Գէորգայ վանքը, չթողնելով նոյն իսկ պաշտամունքի որևէ անօթ, քանդել են սեղանները և սուրբերի պատկերները անպատկառ կերպով պըղծել. Պատկառելի ծերունի տեր Գրիգոր քահանային և մի երիտասարդ եկեղեցականի՝ նորընծայ տեր Գիւտին տանելով մզկիթի առաջ կացնով գլխատել են. Տեղական ուսումնարանի երկու ուսուցիչներին գլխատել են երկար ստիպելուց յետոյ որ նոքա նամազ անեն և տեղացի բոլոր ուսում առած երիտասարդներին մորթել են, ուսումնարանի աշակերտներին սրախողխող արել և աղջիկներին բռնաբարել. Բացի դրանից յարձակուողները 35 երեխաներ բաժանել են իրենց մէջ ուժով մահմեդական դարձնելու համար. Ինչ վերաբերում է շրջակայ գիւղերին՝ Պիւրք գիւղի եկեղեցին և դպրոցը այրել են, տեր Աբրահամ քահանային, ինչպէս նաև Աղուանից, Սիս և Աներլի գիւղերի քահանաներին սպանել են, Բունէյիտում գլխատել են

տէր Մատթէոս քահանային և գլխի վերայ նրա ծայրայեղ անպատուութեան համար ֆէս դրել, իսկ տեղացի Թուրքերի խաները իրենց ատելութիւնը դէպի Քրիստոսի պաշտօնեան ցոյց են տուել մտրակելով նրա դիակը. Առաքելոց վանքը որ Սիս գիւղի շրջակայքումն է՝ կողոպտուած է.

Սու—Շիհրի գաւառում այրել են Էնտերէս աւանի եկեղեցին, որտեղ ապաւինած էին ծերեր, կանայք և երեխաներ. այս խեղճ արարածները կրակի զոհ են գնացել. Այրել են նաև այդտեղի հայոց ուսումնարանը. Մահմեդական են դարձրել Ղուլհիսար գաւառի հայ բնակիչներին, և տեղի հայ աղջիկներին բռնի կնութեան են տուել Թուրքերին.

Տիվրիկի կոտորածների ժամանակ, նոյեմբերի 4-ին կողոպտել են հայոց ս. Աստուածածին և Երրորդութիւն եկեղեցիները, որոնց սեղանները քանդել են, ս. միւռոնը գետին են թափել և արհամարհանքով կոխել. հայոց առաջնորդարանը ևս հրդեհել են. հայոց ուսումնարանը դարձրել են զինուորների պահականոց.

Կիւրասին գիւղում սպանել են տէր Սարգիս և տէր Միքայէլ քահանաներին, ինչպէս նաև Արմուտաղ գիւղի քահանային և ս. Յակովբ վանքը աւերակ դարձրել. Զիմարայում և Ղազմայում եկեղեցիները մասամբ աւերելով մզկիթ են դարձրել, ս. խորհուրդը ոտքի տակ տուել. 650 մարդիկ Ղազմա գիւղի շրջակայ բնակիչներից բռնի մահմեդականութիւն են ընդունել. Նոցա գլխին փաթեթ դնելով ստիպում են օրական 5 անգամ մզկիթ գնալ նամազ անելու և Գրիգոր Պալեան հային արդէն թաղել են տաճկաց գերեզմաններում, իբրև իսլամական կրօնին պատկանողի. Կատորածի սպառնալիքներից վախցած Գետասին և Ապուղնա գիւղերի բնակիչները մահմետականութիւն են ընդունել, նոյնը արել են Զիմարա գիւղի բնակիչները և եկեղեցու քահանան.

Տարէնտէ և Աշոտի գիւղերի եկեղեցիները վառել են, ինչպէս և ուսումնարանները և շրջակայ վանքերը. Զոհերի թուում են Իսահակ եպիսկոպոսը և Աշոտի գիւղի եկեղեցու քահանան. Զիլէի կոտորածների ժամանակ, նոյեմբերի 16-ին, սպանուած են տէր Արիստակէս և տէր Մկրտիչ քահանաները մահմեդականութիւն չընդունելու համար. առաջինի աչքերն են փորել, իսկ երկրորդին մորթեղերծ արել.

Վեղիր—Քեօրփլու (Ամասիայի սանջակ) տէր Բարսեղ քահանային սպանել են դեկտեմբերի 2-ին, եկեղեցին կողոպտուած է. Հաջի—Քեօյ գիւղի հայոց ուսումնարանը այրուած է.

6. ՄԱՄՈՒՐԻԹ—ԻԼ—ԱԶԻԶ—ՆԱՀԱՆԳ.

—Խարբերդի կոտորածի ժամանակ, հոկտեմբերի 26-ին, քանդուած և հրդեհուած են ս. Կարապետ և ս. Ստեփաննոս եկեղեցիք և ուսումնարանները. 200 ընտանիք մահուան սպառնալիքներից ընտիպուած մահմեդական են դարձել. տէր Յակովբ քահանային, որ չէր ուզում ուրանալ իւր հաւատը, մերկացրել են թողնելով միայն մի շապիկ, և մերկ սրերը գլխին բռնած մահ սպառնացել, Թըշուառ եկեղեցականը այդ սպառնալիքներից խելագարուելով բանս է դրուել. Իչմէ գիւղի հայոց եկեղեցին մզկիթ են դարձրել. Այդ գիւղից 40 յայտնի նշանաւոր հայերի բռնադատել են իսլամութիւն ընդունելու և երբ նոքա չեն ընդունել, մէկ մէկ դուրս են բերել մի շէյխի հրամանով և գլխատել եկեղեցու շէմքի վրայ. Եկեղեցու ժամկոչը սպանողների անողոք հրամանին հպատակելով ստիպուել է պարան կապել դիակների ոտներից և մինչև գետը քաշ տալ. Իսկ ինչ վերաբերում է Սորսորի ս. Գէորգ, Թադէի ս. Աստուածածին և Զարդարիչի Ալտիլմիսէի վանքերին՝ բոլորը կողոպտուած են և այրուած և այժմ միայն ծխից սևացած պատերն են մնում. Թադէի վանքում պատկառելի Յովհաննէս վարդապետ Փափազեան, մահմեդականութիւն չընդունելուն համար՝ տեսաւ իւր ձեռքերի մասամբ կտրտուիլը մինչև արմունկը, որից յետոյ նորից առաջարկեցին նրան ուրանալ իւր հաւատը, իսկ երբ վարդապետը հաստատ մնաց իւր հաւատի մէջ, նորա գլուխը կտրեցին եկեղեցու շէմքի վրայ, մինչ նա արտասանում էր քրիստոնէական հաւատոյ հանգանագը.

Հետևեալ քահանաները նոյնպէս սպանուած և մորթեղերծ են եղած.

Հարուռ գիւղի եկեղեցու ծխատ.		տէր Յարութիւնը.
Մուրի « « « « «		տէր Սարգիս.
Գոմք « « « « «		տէր Սէթ.
Քեպլու « « « « «		տէր Սարգիս.
Թատէմ « « « « «		տէր Յակովբ և տէր Ահարոն.
Գիսսերիկ « « « « «		տէր Յակովբ.
Մորինիկ « « « « «		տէր Ղազար.
Հիւսէյնիկ « « « « «		տէր Յովհաննէս և տէր Վահրամ.

Այս քահանաները սպանուել են մահմեդականութիւն չընդունելուն համար, մինչդեռ հետևեալները իրենց հօտի հետ մէկտեղ ստիպմամբ ընդունել են մահմետականութիւն.

Քեօյլու գիւղի եկեղեցու ծխատ.		տէր Պօղոս.
Գիսսմիրիկի « « « « «		տէր Սահակ.
Հիւսէյնիկի « « « « «		տէր Միքայէլ.
Քորիէյի « « « « «		տէր Նշան.
Շէնտիլի « « « « «		տէր Կարապետ.
Կուի « « « « «		տէր Յովհաննէս
Սիքերիկի « « « « «		տէր Գրիգոր.

Երկու ուրիշ եկեղեցականներ՝ տէր Ստեփան և տէր Գարեգին Վարդանեան անյայտացել են.

Հիւսէյնիկ գիւղի հայ եկեղեցու տէր Միքայէլ քահանան ստիպուած է եղել մահմեդականութիւն ընդունել և փաթեթ դնելու գլխին.

Մոսերիկ, Մորենիկ, Բերդակ, Աշուշան, Հիւսէյնիկ, Քոբ, Մեքիրիկ, Շինտել, Քորփէ, Դարսիկ, Զօրցարուք և Բելմիշեն գիւղերի բոլոր հայ բնակիչները իսլամ են ընդունել. Եկեղեցիները, կողոպտուած, աւերուած և հրդեհուած են.

Հարուռ գիւղի վրայ յարձակուելու ժամանակ զինուորները հայոց եկեղեցին հրդեհել են և այնտեղ ապաւինած ժողովուրդը ստիպուել է թողնելու իւր ապաստանարանը կրակից փախչելու համար. Սոցա մի մասը կոտորուել է, իսկ կենդանի մնացածները ազատուել են հաւատն ուրանալով միայն. Այվոսում, Շիրոյում և շրջակայքի աւաններում հայոց եկեղեցու քահանաներին սպանել են և հաղարաւոր հայ ծխականների ստիպել են մահմեդականութիւն ընդունելու.

Խարբերդի ամբողջ թեմում, որտեղ 53-ից աւելի հայ գիւղեր կային, ոչ մի եկեղեցի, ոչ մի ուսումնարան այլևս չէ ծառայում իւր կոչմանը

և ոչ մի քահանայ չկայ ժողովրդի հոգևոր պետքերը լցուցանելու համար։

Հաւատափոխութիւնները և թլփատութիւնները օրեցօր աւելանում են, եկեղեցիները տաճկաց մզկիթների են փոխուել, և տաճիկները որ ձեռք են ձգել նոցա բանալիները այլևս ետ չեն դարձնում։

Ակնի գիւղերում եղած կոտորածի ժամանակ հոկտեմբերի 27-ին կողոպտել, պղծել և աւերել են ս. Փրկիչ վանքը. Լիճք, Նարվէր, Ակնի գիւղերի եկեղեցիները աւերուել են և կողոպտուել։ Այս գիւղերի բոլոր հայ ժողովրդեան առաջարկել են մահմեդականութիւն ընդունելու։ Լիճք գիւղի բնակիչները ստիպուած են եղել ընդունելու այդ առաջարկը, ինչպէս նաև նոցա քահանաները։

Ալբիստան գաւառի Եարբուզ գիւղում, ինչպէս նաև Կակիսոնում, բնակիչների մեծ մասն սպանուել է, շատերը իսլամութիւն են ընդունել։

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։ Յուսանք որ Տէրը իւր եկեղեցու հատար զոհուածների բարեխօսութեամբ կը դթայ մեացեալոց վրայ, և քրիստոնեայ պետութեանց, մանաւանդ մեծազօր Ռուսիոյ, աղաչութեամբ վերստին խաչի պաշտօնը կրվերականգնի ամենուրեք ուր մահմեդական մոլեռանդութիւնը այդ ջրնջել է ջանացել։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ։

ՄԱՅՐ ԱԹՈՌ։

Տեառնընդառաջի օրը, Վեհափառ Հայրապետի հրամանաւ Գեր. Կարապետ եպիսկոպոսը կուսակրօն քահանայ ձեռնադրեց Ս. Էջմիածնի միաբան շնորհունակ Վահան և Գափայէլ սարկաւագներին, վերակոչելով նոցա Կորիւն և Մամբրէ։

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ.

ՏԱԹԵՒԻ ՎԱՆՔԸ։ [1]

Սիւնիքի Ծղուկ գաւառի Դաղբէլ լերան ըստորոտում, ուր սարի բարձունքից լայնանիստ կողերի զառիվայրով իջնող խոխոջաձիգ ձորերը միանում մի գարաւանգ ժայռ են կազմում, ուղիղ Որոտնայ ահեղ անդունդի գլխին, կանգնած է այժմ Տաթևի հռչակաւոր վանքը. Սիւնեաց նախնի փառքի ամայի և խօսուն յուշարձանը։

Մի քանի խօսք այդ Մենաստանի անցեալի մասին։ Տաթևի այժմեան նուիրական վայրերը բոլոր մասերով կառուցուած են Թ. և Ժ. դարերում։ Երբ Սիւնեաց վարդապետարանի ներքին և արտաքին բարգաւաճումն կանոնաւոր հիմքերի վրայ դրուեցաւ։ Սակայն ժողովրդական աւանդութիւնն ընծայում է նորան պատկառելի հնութիւն՝ թագցնելով նորա ծագումը առաքելական դարու անյայտութեան մէջ, իսկ պատմութիւնը վերապահել է նորան գործունէութեան մի փառաւոր շրջան, որի սկիզբն է Է. և վախճանը Ժ.-րդ. դարը։ Պատմական այդ ընդարձակ ասպարիզի վրայ Տաթևը հռչակ ստացաւ իւր միաբանական ուխտով, վանական կազմակերպութեամբ, բազմաթիւ բարեգործական հիմնարկութիւններով և առաւել ևս իւր վարդապետարանով ուր «ժողովատոյց և անյաղթ, փիլիսոփաներ, «անհամեմատ» գրիչներ, «վարդապետական կրթութեամբ» ճոխացած գիտուններ, «արհեստաւոր» նկարիչներ և «երգոց» երաժիշտներ համախմբած նուիրաբերում էին իրենց անձնագիր վաստակների արդասիքը հայ ժողովրդին և հայ եկեղեցուն։ Մի կողմից քրիստոնէական մաքուր կեանքի պարզութեամբ ժողովրդին ջերմեռանդ հաւատոյ և սիրոյ կենդանի օրինակ տալ, միւս կողմից գիտութեան և աւետարանական լուսոյ կանթեղը յարատև վառ պահել՝ հայ հօտի կրթութեան և յառաջադիմութեանը նպաստելու—ահա այս կրկնակի կոչմանն է նուիրուել ընդ միշտ Տաթևի վանքը։

Բայց թէ ո՞րքան բեղմնաւոր եղաւ Սիւնեաց ուխտն իւր այս կոչմամբ, ի՞նչպիսի բարիքներ բերաւ հայ ազգի համար, վկայում և խօսում են այդ մասին բազմաթիւ իրողութիւններ, որոնք կապուած են Տաթևի անուան հետ և ընդգրկում են յաջորդաբար մի քանի դարերի պատմութիւն։

Է.-րդ դարից սկսած, երբ հայ ազգը հզօր դրացիների յարձակումներից խսպառ ուժասպառ, իւր ներքին ամրութիւնը որոնում էր եկեղեցւոյ հովանու տակ, և յաճախ ստիպուած էր կրօնական վտանգաւոր մաքառման մէջ մտնել յանուն այդ եկեղեցւոյ անարատութեան՝ արևմտեան քրիստոնեաների նենգ հրապոյրների դէմ, որոնք հաւատոյ և խղճի ազատութեան վաճառման գնով միայն հայերին օգնութեան ձեռք մեկնելու յոյսեր էին տալիս, Տաթևն էր այն կենդրոնը, որտեղից Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառութեան բազմաթիւ ջատագովներ հանդէս եկան և հայի հաւատը, հայի խղճի ազատութիւնը պաշտպանեցին, Քաղկեդոնականութեան դէմ մղած դարաւոր պայքարի առաջնորդները Սիւնեաց վարդապետներն էին, որոնք իրենց պատրաստութեամբ, ս. Գրքի գիտութեան պաշարով աջակցում էին հայրապետներին, խորհուրդներ տալիս, մեկնում և բացատրում եկեղեցւոյ ուղիղ դաւանանքը, նախագահում ազգային ժողովներում, պատրաստում նախարարներին և ժողովրդին բարոյապէս՝ անվեհերութեամբ դիմադրելու այն բոլոր արտաքին հոսանքներին, որոնք կարող էին փոքր ինչ արատաւորել Հայոց եկեղեցւոյ առաքելական ոգին և շարժել նորա անկախութեան և ինքնուրոյնութեան հիմունքը. Պետրոս, Վրթանէս, Մաթուսաղա, Ստեփաննոս և այլք՝ որոնք յայտնի են «իբրև գլուխ ամենայն

---

1. Հռչակաւոր վանքիս լուսցած հազարամեակի առթիւ հրատարակում ենք նրա անցեալ եւ այժմեան վիճակի այս համառօտ նկարագիրն ու պատկերը։ Խմբ.